ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2018

2017/2018 ՄՐՑԱՇՐՋԱՆ

ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2018

2017/2018 մրցաշրջան

ՀՖՖ Արտոնագրման բաժին
Օգոստոս 2018թ.

Հարգելի բարեկամ,

ՀՖՖ Արտոնագրման բաժինը Ձեզ է ներկայացնում ՀՖՖ ակումբների արտոնագրման համեմատական վերլուծության վեցերորդ հրատարակությունը 2017/2018 թվականների մրցաշրջանի և 2017 թվականի ֆինանսական տարվա վերաբերյալ: Այն ամբողջապես վերաբերում է հայկական ակումբային պրոֆեսիոնալ ֆուտբոլին՝ իր մեջ ներառելով ՀՀ Բարձրագույն խմբի ակումբների մասին մանրամասն տեղեկատվություն համեմատական կարգով: Այս փաստաթուղթը հրատարակվում է վեցերորդ տարին անընդմեջ և շարունակում է հանդիսանալ ամենամյա սկզբունքով հրապարակվող միակ փաստաթուղթը, որը պարունակում է հայկական ակումբների և հայկական ֆուտբոլի վերաբերյալ ֆինանսական, ենթակառուցվածքային, մարզչական, կադրային, իրավական և այլ կարևոր տեղեկատվություն:

Այս զեկույցն իր մեջ ներառում է 2017/2018 թվականների մրցաշրջանի և 2017 թվականի ֆինանսական տարվա ընթացքում հավաքագրված ողջ տեղեկատվությունը, որոնք ակումբները ներկայացրել են ՀՖՖ ակումբների արտոնագրման և վերահսկողության գործընթացի շրջանակներում: Զեկույցում նաև անդրադարձ է կատարվում 2018/2019 թվականների մրցաշրջանի արտոնագրման գործընթացին և արտոնագրային որոշումներին, քանի որ նշված մրցաշրջանի արտոնագրերն ակումբներին շնորհվել են 2017/2018 թվականների մրցաշրջանի ընթացքում:

Զեկույցում ներառել ենք նաև այն նշանակալից իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել նախորդ մրցաշրջանի ընթացքում, և որոնք դուրս են ակումբային ֆուտբոլի շրջանակներից, ինչպես օրինակ նոր ենթակառուցվածքների կառուցումն է:

Վերոնշյալ տեղեկատվությունը չէր լինի հասանելի և ակումբների արտոնագրման համեմատական զեկույցը չէր դառնա իրականություն առանց մեր ակումբների կողմից համապատասխան աջակցություն և պատրաստակամություն ցուցաբերելու: Այդ առումով մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ՀՀ Բարձրագույն և Առաջին խմբերի բոլոր ակումբներին իրենց աջակցության և սույն զեկույցի կազմմանը մասնակցություն ցուցաբերելու համար:

Վստահ ենք, որ ՀՖՖ ակումբների արտոնագրման համեմատական վերլուծություն զեկույցը կոչված է բարձրացնելու և ավելացնելու հայկական ֆուտբոլում առկա թափանցիկության մակարդակը, ինչը հանդիսանում է ՀՖՖ քաղաքականության անկյունաքարերից մեկը:

ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի ղեկավար
Արթուր Ազարյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 7
2. ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ 13
3. ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐ ԵՎ ԼԵԳԻՈՆԵՐՆԵՐ 21
4. ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ 25
5. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 31
6. ՄԱՐԶՉԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԵՎ ԱՐՏՈՆԱԳՐԵՐ 35

FC BANANTS
FC BANANTS
FC GANDZASAR KAPAN
FC GANDZASAR KAPAN

ԳԼՈՒԽ 1. ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Արտոնագրման գործընթաց

ՀՖՖ Ակումբների արտոնագրման համեմատական վերլուծությունը շարունակում է մնալ իր տեսակի մեջ հայկական ֆուտբոլին վերաբերող միակ ուսումնասիրությունը, մի կողմից հանդիսանալով ակումբային ֆուտբոլի ուղեցույցը, մյուս կողմից կատարելով ժամանակակից ֆուտբոլի կարևոր միտումների արձանագրման և փաստաթղթավորման գործընթացը: Վերլուծությունը ներկայացնում է անցնող մրցաշրջանում արձանագրված իրադարձությունները՝ փաստերի հիման վրա, որոնք և՛ դրական, և՛ բացասական միտում ունեն: ՀՖՖ Արտոնագրման բաժինը սույն վերլուծությունը կազմել է ՀՖՖ ակումբների կողմից ներկայացված արտոնագրման 5 չափանիշների (մարզական, կադրային և վարչական, իրավական, ենթակառուցվածքային և ֆինանսական) հիման վրա՝ պահպանելով անկախության և գաղտնիության պատշաճ մակարդակը:

Վերլուծության հիմնական առանցքն են կազմում նախորդ 14 մրցաշրջանների ընթացքում ՀՖՖ Ակումբների արտոնագրման գործընթացի մասին տեղեկատվությունը, կայացված որոշումների համեմատությունները՝ ըստ Ազգային և ՈՒԵՖԱ-ի արտոնագրային գործընթացների, մարզասերների՝ ներքին առաջնություններին խաղերի հաճախելիությունը, ՀՀ Բարձրագույն և Առաջին խմբերի հանդիպումներին մասնակցած ֆուտբոլիստների տարիքային առանձնահատկությունները, ինչպես նաև ակումբների ֆինանսական հաշվետվությունների վրա հիմնված տեղեկությունները եկամուտների ու ծախսերի մասին:

ՀՖՖ Արտոնագրման բաժինը լուրջ առաջընթաց է գրանցել նաև մարզչական կրթության կազմակերպման և անցկացման ոլորտում: 2018 թվականին մեկնարկեց ՀՖՖ Մարզչական ՊՐՈ արտոնագրի դասընթացը: Դրանով սկիզբ դրվեց դասընթացի 13 մասնակիցների մեկուկես տարի տևողությամբ բարդ ճանապարհի հաղթահարմանը: Միաժամանակ մեկնարկեցին ՀՖՖ Մարզչական Ներածական, “Բ” և “Ա” արտոնագրերի դասընթացները: Արդեն երկրորդ տարին անընդմեջ անցկացվող Մարզչական Ներածական դասընթացը, մասնակիցների մեծ քանակով պայմանավորված, անցկացվեց 2 փուլով, և ավարտական քննությունները բարեհաջող հանձնած մասնակիցները հնարավորություն ստացան մասնակցելու նաև Բ արտոնագրի դասընթացին: Հաջորդ մրցաշրջանում ՀՖՖ Արտոնագրման բաժինը պլանավորում է անցկացնել նաև Դարպասապահների մարզչական Ա արտոնագրի, ինչպես նաև Ֆուտզալի մարզչական Բ արտոնագրի դասընթացներ:

10 ԱՉԳԱՅԻՆ ԱՐՏՈՆԱԳԻՐ

6 ՈՒԵՖԱ-Ի ԱՐՏՈՆԱԳԻՐ

2004-2018/2019թթ. ՀՖՖ Ալբոմների ստացած և մերժված Ազգային արտոնագրեր



2008-2018/2019թթ. ՀՖՖ Ալբոմների ստացած և մերժված ՈՒԵՖԱ-ի արտոնագրեր



VIVA CELL
MTS
JAKO
JAKO
SPORT
FC BANANTS YEREVAN

ԳԼՈՒԽ 2. ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Հաճախելիություն

Համեմատելով 2016/2017 և 2017/2018 մրցաշրջանների ՀՀ Բարձրագույն խմբի առաջնության հաճախելիության ցուցանիշները՝ տեսնում ենք, որ ընդհանուր երկրպագուների թիվը նվազել է մոտավորապես 21%-ով, և այս տարի վերջին 5 տարվա ընթացքում գրանցվել է ամենացածր ցուցանիշը՝ 38150 հանդիսական:

Տնային հանդիպումների ժամանակ երկրպագուների ամենամեծ բանակը ունեցել է Շիրակ ակումբը, որի խաղերն այս տարի դիտել է 7870 հանդիսական, ինչը սակայն նույնպես ցածր է ակումբի նախորդ երկու տարիներին գրանցած արդյունքներից: Շարունակում է մեծ տեմպերով նվազել Գանձասար-Կապանի երկրպագուների մարզադաշտ հաճախելիությունը, որի հիմնական պատճառը շարունակում է մնալ տնային մարզադաշտի հաճախակի փոփոխությունը: Ավարտված մրցաշրջանում կապանյան ակումբի խաղերը դիտել է 4080 հանդիսական, որը կազմում է նախորդ տարվա ցուցանիշի մոտ կեսը: Հարկ է նաև նշել, որ նախորդ մրցաշրջանի երկրպագուների հաճախելիության թվով առաջատար Բանանցի հանդիսականների թիվն էլ կրճատվել է՝ 11200-ից դառնալով 7550:

ՀՀ Առաջին խմբի առաջնության նկատմամբ հետաքրքրությունն աճել է: 2016/2017 մրցաշրջանում այդ ցուցանիշը կազմել է 9105 ֆուտբոլասեր, իսկ 2017/2018 մրցաշրջանում գրանցվել է 14630 հանդիսական: Մարզասերների թվաքանակի աճը նաև պայմանավորված է մասնակից ակումբների քանակի ավելացմամբ: Ավարտված մրցաշրջանում Առաջին խմբում հանդես էր գալիս 10 թիմ:

Սակայն նվազել են ՀՀ Գավաթի խաղարկության հաճախելիության ցուցանիշները: Այդ ցուցանիշը 2016/2017 մրցաշրջանում արդեն իսկ նվազել էր և կազմում էր 5600 երկրպագու: Այս մրցաշրջանում այդ թիվն էլ ավելի է նվազել և կազմել է 3770 երկրպագու:

Ինչպես նաև անկում է ապրել եզրափակիչ հանդիպման օրը մարզադաշտ այցելած հանդիսականների քանակը: Այդ ցուցանիշը 2000-ից դարձել է 1000:

ՀՀ Բարձրագույն խմբի առաջնության հաճախելիություն



2017/2018 ՀՀ Բարձրագույն խմբի առաջնության հաճախելիությունը՝ ըստ ակումբների



ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությունների հաճախելիություն 2013/2014թթ. - 2017/2018թթ.



ՀՀ Առաջին խմբի առաջնության հաճախելիություն 2017/2018 թթ.



Ընդամենը՝ 14630 հանդիսական

ՀՀ Գավաթի խաղարկության հաճախելիություն
2018



* Եզրափակիչ հանդիպմանը ներկա է եղել 1000 հանդիսական

HUAWEI
ZCMC

ԳԼՈՒԽ 3. ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐ ԵՎ ԼԵԳԻՈՆԵՐՆԵՐ

Հաշվետվության այս հատվածում ներկայացված է ՀՀ Բարձրագույն խմբի առաջնության թիմերի կազմում հայտավորված ֆուտբոլիստների տարիքային համեմատական վերլուծությունը: Ի տարբերություն 2016/2017 մրցաշրջանի, այս տարի թիմերը հանդես են եկել ավելի երիտասարդ կազմերով: Առաջնությանը մասնակցած ընդհանուր թվով 253 ֆուտբոլիստների միջին տարիքը կազմում է 24.59:

Ամենաերիտասարդ կազմ ունեցող Երևանի Փյունիկում այս մրցաշրջանում հանդես է եկել 18-20 տարեկան 12 ֆուտբոլիստ, իսկ թիմի ֆուտբոլիստների միջին տարիքը մոտ 22 է, ինչը արդեն մի քանի տարի է ամենացածրն է համարվում Բարձրագույն խմբի առաջնությունում: Հարկ է նշել, որ 30 տարեկանից բարձր և ոչ մի ֆուտբոլիստ հանդես չի եկել Փյունիկի կազմում:

Առաջնության ոսկե մեդալակիր Երևանի Ալաշկերտի կազմի մոտ կեսը 24-ից 30 տարեկան էին (24 ֆուտբոլիստ), ինչով էլ պայմանավորված էր ակումբի խաղացողների միջին տարիքը՝ 27.4: Մյուս ակումբների հետ համեմատած՝ ռեկորդային էր Ալաշկերտի ցուցանիշը 30 տարեկանից բարձր ֆուտբոլիստների քանակով (8 ֆուտբոլիստ):

Երկրի փոխչեմպիոն Երևանի Բանանցը հանդես եկավ համեմատաբար տարիքային հավասարակշռված կազմով, խաղաժամանակ տրամադրելով հավասարապես 18-23 տարեկան՝ 15 և 23-ից բարձր տարիքային՝ 15 ֆուտբոլիստների:

Ինչպես և Ալաշկերտը՝ Գանձասար-Կապանը նույնպես մեծամասամբ ապավինել էր 24-30 տարեկան ֆուտբոլիստներին: Կապանյան ակումբի ֆուտբոլիստների միջին տարիքը կազմում է 25.32, որը նույնպես բարձր է 2017/2018 մրցաշրջանում Բարձրագույն խմբի ֆուտբլիստների միջին տարիքային ցուցանիշից:

ՀՀ Շիրակի մարզը ներկայացնող՝ Գյումրիի Շիրակը ավարտված մրցաշրջանում ներկայացված էր 21-30 տարեկան 22 ֆուտբոլիստներով:

Երևանի Արարատի ֆուտբոլիստների միջին տարիքը կազմում էր 24.28, և ակումբը վստահում էր հավասարապես թե 18-20 տարեկան, թե 30 տարեկանից բարձր խաղացողներին (4-ական ֆուտբոլիստ): Գերակշիռ մաս էին կազմում 21-23 և 24-30 տարեկան ֆուտբոլիստները:

2017/18 մրցաշրջանի ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությունում հանդես եկավ ընդհանուր թվով 70 լեգիոներ: Ալաշկերտն ու Գանձասար-Կապանը առաջատարներն էին կազմում հայտավորված արտասահմանցի ֆուտբոլիստների քանակով՝ 15-ական խաղացող: Ամենաքիչը՝ 6 լեգիոներ, հանդես էր գալիս Արարատում:

2017/2018 թթ. ՀՀ բարձրագույն խմբում հանդես եկած ֆուտբոլիստներ



** Միջին տարիքը՝ 24.59*

MKRTCHYAN
3
NRANYAN
9

ԳԼՈՒԽ 4. ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Համաձայն ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգի՝ Բարձրագույն խմբի բոլոր ակումբների ֆինանսական հաշվետվությունները ենթարկվում են տարեկան պարտադիր աուդիտի, որի արդյունքները ներկայացվում են ՀՖՖ Արտոնագրման բաժին: Այս տարին էլ բացառություն չէր այդ տեսանկյունից:

Ֆինանսական չափանիշի պատշաճ իրագործումը պարտադիր պահանջ է՝ ՈՒԵՖԱ-ի մրցաշարերին մասնակցելու արտոնագիր ստանալու համար: 2018 թվականին Բարձրագույն խմբի բոլոր 6 ակումբները բավարարել են վերոնշյալ չափանիշը՝ այդպիսով հնարավորություն ստանալով մասնակցելու 2018/2019 թվականների ՈՒԵՖԱ-ի կողմից կազմակերպվող ակումբային մրցաշարերին:

Ֆինանսական չափանիշի պահանջներին բավարարելու համար ակումբները պետք է ներկայացնեն հետևյալ հաշվետվությունները՝ ֆինանսական վիճակի մասին, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին, դրամական հոսքերի վերաբերյալ, ինչպես նաև՝ սեփական աշխատակիցների, հարկային և սոցապ մարմինների և այլ ակումբների նկատմամբ ժամկետանց վճարումների բացակայության վերաբերյալ հաշվետվություններ:

Ստացված տեղեկատվության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2017 թվականի հաշվետու տարում՝ 2016 թվականի համեմատությամբ, ՀՀ ակումբների ընդհանուր եկամուտները աճել են շուրջ 6%-ով, միևնույն ժամանակ, վերջիններիս ծախսերը նույնպես աճել են անհամեմատ մեծ ցուցանիշով՝ 43%-ով: Ծախսերի կտրուկ աճը պայմանավորված է աշխատավարձերի աճով և նոր խաղացողների ձեռքբերմամբ:

Հարկ է նշել, որ վերջին ժամանակաշրջանում առաջին անգամ ակումբներից մի քանիսը եկամուտներ են ստացել հեռարձակման իրավունքներից: Սակայն, այդուհանդերձ, ակումբների հիմնական եկամտի աղբյուրը շարունակում է մնալ ՈՒԵՖԱ-ից ստացված պարգևավճարները և համերաշխության գումարները:

Հաշվապահական հաշվեկշիռ 2017 ֆինանսական տարի



Եկամուտներ ֆինանսական տարի 2017



Ծախսեր ֆինանսական տարի 2017



- Ընդհանուր գործառնական ծախսեր առանց տրանսֆերների
- Մաշվածություն և ամորտիզացիա
- Ծառայությունների և նյութերի արժեք
- Այլ գործառնական ծախսեր
- Վարձու աշխատողներին տրվող աշխատավարձ և հարկեր

ԳԼՈՒԽ 5. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան մշտապես մեծ ուշադրություն է դարձրել ֆուտբոլային ենթակառուցվածքների զարգացմանը: Ավանի, Գյումրու, Վանաձորի ակադեմիաներն այս առումով դարձել են ֆեդերացիայի այցեքարտերը:

Մարզային ենթակառուցվածքների զարգացման ծրագրին համապատասխան՝ 2017 թվականին շարունակվել են ֆուտբոլային դպրոցների, խաղադաշտերի, ակադեմիաների շինարարության աշխատանքները Սյունիքի, Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի, Կոտայքի և Արմավիրի մարզերում: Ընդ որում արդեն մեկնարկել է այսպես կոչված "Սահմանամերձ բնակավայրեր" ծրագիրը, համաձայն որի նախատեսում ենք Հայաստանի սահմանամերձ բնակավայրերում կառուցել և վերանորոգել ֆուտբոլային խաղադաշտեր և դպրոցներ: 2018 թվականին մեկնարկել են Տավուշի մարզի Ներքին Կարմրաղբյուր գյուղում ֆուտբոլի խաղադաշտի վերակառուցման աշխատանքները:

2017 թվականին մեկնարկել է նաև Երևանից դուրս գտնվող մարզադաշտերի վերակառուցման աշխատանքները:

Արմավիրի քաղաքային մարզադաշտ

Երկարատև բանակցություններից հետո Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիային հաջողվել է իրավունք ստանալ վերակառուցելու մարզադաշտը և արդեն կատարվել են մեծածավալ աշխատանքներ: Մասնավորապես, մարզադաշտի տարածքից հեռացվել է փլատակների վերածված տրիբունան, և դրա տեղում արդեն պատրաստ է ժամանակակից պահանջներին համապատասխանող արհեստական խոտածածկով խաղադաշտը: Նախատեսվում է վերակառուցել մարզադաշտի հիմնական տրիբունան, կառուցել միջազգային չափանիշներին համապատասխանող հանդերձարաններ, այլ անհրաժեշտ շինություններ: Արմավիրի մարզադաշտը շուտով կունենա նաև բնական խոտածածկով խաղադաշտ, մարզասրահ, լոգարան:

Վանաձորի «Լոռի» մարզադաշտ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախաձեռնությամբ, Լոռու մարզի և Վանաձոր քաղաքի ղեկավարների օժանդակությամբ, սկսվել է այս մարզադաշտի վերակառուցման աշխատանքները: Նախատեսվում է Վանաձորի մարզադաշտը վերակառուցել ամբողջապես, ապահովել բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքներով ու այն դարձնել միջազգային ստանդարտներին համապատասխանող, ուր հնարավոր կլինի անցկացնել անգամ միջազգային հանդիպումներ:

2017-2018 թվականներին շարունակական բնույթ է կրել նաև ֆուտբոլային ակադեմիաների շինարարությունը:



Ինչպես հայտնի է, 2017 թվականի գարնանը տեղի ունեցավ Վաղարշապատի ֆուտբոլի ակադեմիայի հիմնարկեքի արարողությունը: Ներկայումս կառուցողական աշխատանքները ամբողջովին ավարտվել են: Պատրաստ են արհեստական ու բնական խոտածածկով խաղադաշտերը, տրիբունան, լողավազանը, ակադեմիայի շենքը:

Շարունակվում է նաև Սիսիանի ֆուտբոլի դպրոցի կառուցման աշխատանքները: Արդեն պատրաստ է արհեստական խոտածածկով խաղադաշտը՝ ջրամատակարարման և դրենաժային ժամանակակից համակարգերով: Ավարտին են մոտենում դպրոցի շենքի և տրիբունայի շինարարական աշխատանքները: Հաշվի առնելով Սիսիանում ֆուտբոլով մարզվելու ցանկացողների քանակի մեծ աճը՝ 2018 թվականին ՀՖՖ-ն որոշել է ընդլայնել կառուցապատման աշխատանքները. արհեստական խոտածածկով խաղադաշտի եզրերում կառուցվում են երկու փոքր մարզումային խաղադաշտեր՝ արհեստական ու բնական խոտածածկերով, լուծվում են պարիսպի կառուցման և տարածքի ջրահեռացման խնդիրները:



Սևանի քաղաքապետարանի առաջարկով՝ Սևանի նախկին զբոսայգու տարածքում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան կառուցում է ֆուտբոլի դպրոց, որն ունենալու է արհեստական խոտածածկով խաղադաշտ: Դպրոցի մասնաշենքն էլ բաղկացած կլինի 3 հանդերձարաններից, անհրաժեշտ այլ օժանդակ սենյակներից, կտեղադրվի արևային էներգիան օգտագործելու համակարգ, 300-400 տեղերով տրիբունա, անհրաժեշտության դեպքում՝ հնարավոր է նաև երկրորդ խաղադաշտի տեղադրումը:

ԳԼՈՒԽ 6. ՄԱՐԶՉԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԵՎ ԱՐՏՈՆԱԳՐԵՐ

2017 և 2018 օրացուցային տարիները բավականին բեղմնավոր էին մարզչական դասընթացների տեսանկյունից: ՀՖՖ Արտոնագրման բաժնի կողմից որդեգրված որակի բարձրացման քաղաքականությունը շարունակում է հանդիսանալ կազմակերպված դասընթացների հենասյունը:

2018 թվականին մեկնարկեց ՀՖՖ Մարզչական ՊՐՈ արտոնագրի երրորդ դասընթացը, որին մասնակցության հայտ էին ներկայացրել 13 մարզիչներ ինչպես Հայաստանից, այնպես էլ արտերկրից: Դասընթացի 18 ամիսների ընթացքում մասնակիցները հնարավորություն կունենան խորացնել իրենց գիտելիքներն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են սպորտային հոգեբանությունը և բժշկությունը, տաղանդի բացահայտումը, ակումբներում խաղացողների զարգացման երկարաժամկետ ծրագրերը, բարոյականությունը և էթիկան, ԶԼՄ-ների հետ հարաբերությունները, հռետորական արվեստը և շատ ու շատ այլ թեմաներ, որոնք առանձնակի կարևորություն ունեն մարզչական գործունեության ընթացքում: Դասընթացի մասնակիցները կայցելեն եվրոպական մի շարք երկրներ, տեղում կդիտեն ֆուտբոլային հանդիպումներ, կկատարեն մասնագիտական վերլուծություններ, կծանոթանան ֆուտբոլային ենթակառուցվածքներին: ՀՖՖ Մարզչական ՊՐՈ արտոնագրի դասընթացն ավարտվելու է 2019 թվականի հոկտեմբերին, երբ մասնակիցները կհանձնեն ավարտական քննությունները:

2018 թվականին արդեն երկրորդ տարին անընդմեջ Արտոնագրման բաժինը կազմակերպեց և անցկացրեց ՀՖՖ մարզչական Ներածական դասընթացը, որը մասնակիցների մեծ քանակով պայմանավորված՝ անցկացվեց երկու փուլով: Թվով 45 մասնակիցները մեկշաբաթյա դասընթացից հետո հանձնեցին միջանկյալ քննություններ, որոնք բարեհաջող հանձնած մասնակիցները հնարավորություն ստացան մասնակցելու ՀՖՖ մարզչական Բ արտոնագրի դասընթացին: Այս դասընթացին մասնակցում էին 26 ներկայիս և ապագա մարզիչներ: 2018 թվականին նախատեսվում է անցկացնել ևս երկու նման դասընթաց Գեղարքունիքի և Տավուշի մարզերում՝ նպատակ հետապնդելով բարձրացնել մարզերում աշխատող մարզիչների մասնագիտական հմտությունները և աջակցել մարզերում ֆուտբոլի մասսայականացմանն ու զարգացմանը: 2019 թվականին ՀՖՖ Արտոնագրման բաժինը նախատեսում է նաև անցկացնել Դարպասապահների մարզչական Ա արտոնագրի և Ֆուտզալի մարզչական Բ արտոնագրի դասընթացներ:

Միաժամանակ մեկնարկեց ՀՖՖ Մարզչական Ա արտոնագրի դասընթացը: Ծրագրով նախատեսված է 6 ամիս տևողությամբ դասընթաց, որին մասնակցում են 15 մարզչական Բ արտոնագիր ունեցող մարզիչներ:

Հեղինակ՝

Վահան Բերակչյան	**ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետ**

«ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2018» - ի ստեղծմանը նպաստել են՝

Արմեն Մինասյան	**ՀՖՖ Առաջին փոխնախագահ և Գործադիր տնօրեն, ՀՖՖ Ակումբների արտոնագրման համակարգի և վերահսկողության գործընթացի նախագծի ղեկավար**

ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտ՝

Արթուր Ազարյան	**ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի ղեկավար**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ
Արտոնագրման բաժին

Հասցե՝ Խանջյան 27, Երևան, 0010, Հայաստան
Հեռ.՝ +37411888808
Էլ. փոստ՝ licensing@ffa.am
Կայք՝ www.ffa.am